



10 ՓՐՅ.

10 ՓՐՅ.

ՔԱՂԱՔԱԿԵՆ ԵՂՔԱՅԻՆ ԵՐ ԱՓԵՐՏՐԵԿԱՆ

Գ.ՏԱՐԻ 1289 ՇԱՊԱՆ 15 ՈՒՐԱԹ 6 ՀՈՏԵՄԲԵՐ 1872 ԿԹՕՆ 29 Ն.Տ. ՀՈՒՏԵՄԲԵՐ 18 Թ. 816

ԱՂՔԱՅԻՆ

ՊԱՇՏՆԱԿԱՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ

Աղգ. Բագրատիան Ժողովն ըստ Սահմանագրութեան Ուսումնական Խորհրդոյ բնարտած ինն աշկարհերով հետեւեալ անդամներն ընտրած է նոյն պաշտօնին

Խանտանեան Յարութիւն Էֆ. Ասնպատ Բէրեան Յովակիմ Սողապ Էնքուրճեան Տէրեանք

Քիւրճեան Յարութիւն Թորոսեան Գրիգոր Մալէզեան Յովակիմ Միքայէլեան Սիմեոն

Արդէն յիշեալ Խորհուրդն իւր Գիւշանք կազմած և իւր օրինաւոր նիստերն աշկարհում ընկելով հարկ գաւանդի քան զպաշտօնական ծանուցումը հրատարակել ի տեղեկութիւն որոց որ անկէ որպէս զի Սահմանագրապէս իրենց պաշտօնական յարաբերութիւններն Աղգ. Ուսումնական Խորհրդոյ հետ կատարելով ջանադիր գանձին

Յ. Հոկտ. 1872

Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս

Երէկ դարձեալ գայինք փանտեանի գատին համար իւրաջի պատմական տետանին

Վանձ. նախագահն յայտնեց թէ Միւթէսարքի բաշային հետ տեսնուելով որոշած են գրել Ղալաթիոյ գայմագամութեան վիճուալ փանտեանի թէ իւր

զրկած փանտեանի փոխանորդութիւնը ըստ օրինի ընդունուած չէ և թէ իւր լրացին մէջ ըրած առարկութիւնները պաշտօնական չեն կրնար սեպուել ուստի յառաջիկայ երկու շաբթի օր կամ անձա՞ք ներկայանալու է և կամ եթէ օրինաւոր պատճառաբանութիւն մ'ունի իւր ստորագրութիւնը կրող զբով մը ժողովին հաղորդելու է

Հետեւեալը երկու շաբթի օր դարձեալ պիտի ներկայանանք

Մասիս ճշգրտու համար թէ իր քով եղած աղջիկը Մշեցի Տ. Յարութիւն քահանային հետ մանչու հաղուստով բռնուած և հիւանդանոց տարուած աղջիկը չէ եռ ասող նամակ մը կը հրատարակէ հիւանդանոցէն զրկուած և կէս պաշտօնական զիւրքով

Այս առաջին անգամն է որ եռ ասող բոյց պաշտօնական նամակ մը տեսանք այս մէկդի

Մասիս կրտէ թէ իւր քովի աղջիկը ցրուիչը 1868 յուլիս 13ին հիւանդանոց տարուած մէկն է և թէ վերջապէս Մասիս իր քովն առած է զայն

Ահա այս թուականն է որ Մասիսին օձիքը ձեռք կուտայ

Մասիս կրտէր թէ իր ցրուիչին ներքինի արուէգ կամ աղջիկ ըլլալը չը գիտեր

Սակայն սուտ է

1868 յուլիս 13ին հիւանդանոց զըրկուած այդ անձին անունն է ՄԱՐԻԱՄ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ Սա այնքան էգ է որ կանանց բաղ

նիքը կերթայ կանանց հաղուստով

Արդ Մասիսի ցրուիչը թէ քահանային հետ բռնուած մանչու հաղուստով աղջիկը ըլլայ և թէ Մասիսի քով այժմ մանչու հաղուստով ծառայող Մարիամ Պաղտասարեանն ըլլայ Մասիսի վրայ եղած ամբաստանութիւնը չարդարանար վան զի Մասիս Մարիամ Պաղտասարեանը մանչու հաղուստով կը գործածէ

Մասիս իրրե էգ կանանց բաղիքը կնկան հաղուստով յաճախող Մարիամին մանչու հաղուստով իր լրացիւնները ցրուել կուտայ

Մասիս Մարիամ անուն սպասուհի մը կառնէ իր քովը և անոր անունը եզրիս է կրտէ

Ու զոգը թող երթայ հիւանդանոցի գրասենեակը և նայի աչքովը թէ

1868 յուլիս 13ին հիւանդանոց գացած աղջկան անունը Մարիամ Պաղտասարեան է թէ եղիս

Ահա այս թուականը ինչպէս ըսինք կը մասնէ զՄասիս թէ մանչու հաղուստով աղջիկ մը ունի իւր քովը աղջիկ այնքան որ Հիւանդանոցի Մարգիտ աղջկանցեալ զիչեր Գուգիւնճուղի նաւամտայցին վրայ մանչու հաղուստով տեսած միջոցին չադուն հոս ինչքան ունիս կրտէ նա ալ կարագետ աղային (Մասիսին) կ'սպասեմ կար կրպատուիս անէ այս պատմութիւնը Հիւանդանոցի Մարգիտ աղջկա ըրու մեզ Պատրիարքարանը սնտուկի սենեակը բաղմոց տուլ

Արդոյ խմբագիր Օգոստոս 31 թուով վանէն գրուած նամակ մը կրտէ որ Գողոս վարդապետ

անձնական տկարութեան պատճառաւ Արճիշոյ շերմակները գնացած լինելով օգոստոս 24 ին անգլոյն կուսակալի հըրամանաւ 30 էն աւելի թնդանթածիգ և ճէնտէրմէ զօրք Արճիշոյ միւտիր Հառան պէյի հրամանատարութեամբ, առանց մէկու մը կասկած տալու, Պօղոս վարդապետ կը ձերբակալեն և իրենց ստացած հրամանը կը յայտնեն: Պօղոս վարդապետ սիրով կ'ընդունի, բայց կը խնդրէ որ վան վերադառնայ և իր անձնականին գործքերը կարգադրէ. Հասան պէյ ասոր անկարելի ըլլալը կը յայտնէ. յիշեալը գոնէ իր ձին հեծնելու շնորհը կը խնդրէ, դարձեալ չ'ընդունուիր և ուրիշ . . . ձի մը կը ներկայացուի և առանց անձնական խօթութեանը անուշաւ, շուտափոյթ իւշ-բիւլիսէ կը տանին:

Այլ աւաղ առանց թնդանթած զրկելու թնդանթածիգ զօրքերը զրկեր են:

Կեցցէ՛ Սրբազան Հայրիկ, — իւր կըղերները առանց քննադատելու իբր յանցաւոր ամեն տեսակ անպատուութեանց կենթարկէ և այսպէսով խրախոյս կուտայ վատարանց հարստահարիչներու, Հարստահարիչներու մասին անհոգ ես, քու կըրդ առանց յանցանքի առանց ստուգութեան անուանարկելով կ'աքտորես իր ռիերիմ թըշնամեաց ձեռօք:

Վասպուրականցի 120,000 ժողովրդեան պատիւը կորուսելու մասին պատճառը դարձեալ դու եղար, վասն զի Պօղոս վարդապետը 15 տարիէ ՚ի վեր ժողովրդեան պատիւը և ինքը կը պաշտպանէր, պաշտօնական ժողովոց մէջ կը գտնուէր իր վիճակին բարօրութեանը համար և առանց իր հաւանութեան վճռողութիւն չէին տար, և այս առժամանակեայ նորընտիր երիտասարդ տեղապահը (Գարեգին վարդապետ) որոմ ցանկէն ի դատ բան մը չըրաւ և մանաւանդ ժողովոց մէջ ներկայ գըռնուիլն անգամ կուսակալը չէ ընդուներ:

Յօնք յարդարեմք ըսելով աչք Բ'ալ հանեցիր, պատճառը կը կարծուի թէ Պօղոս վարդապետի դէմ սըծուցած ռիակալութիւնը է, աքտոր կարդացիր, հիմայ որ բարձրաստիճան պաշտօնատարաց քով իւր և իր վիճակին յարգը կ'իսով չափ կորուսելու պատճառ եղար, արդ' անոր ու հասան վասպուրականի մեղքը ո՛վ ժառանգեց:

Ահաւասիկ բաղձանքը կատարուեցաւ

Սրբազան Հայրիկ, հանրագրով իմացուցինք թէ Պօղոս վարդապետի յանցանքը ի՞նչ է, և այս մասին ալ խառն ժողովը 2—3 նիստի հարցուցեր էր, բայց միայն վերջին անգամ խառն ժողովը միայն սա պատասխանը կրցեր է ընդունել. Պօղոս վարդապետի յանցանքը անքաւելի յանցանք մ'է, վասն զի նա իր ստորագրութեամբ քաղաքական հանրագիրներ զրկեր է Ռուսաստան, ասով կարծեմ խառն ժողովը հաւատացեր է, բայց ասի պօշաւոր սուտ մ'է: Պօղոս վարդապետ իր ստորագրութեամբ ամենեկին հանրագիր զրկած չէ Ռուսաստան:

Դարձեալ խօստացեր էիք Պօղոս վարդապետ իր վիճակը դարձնել, բայց

Արդ՝ քանի մը հարցմունք ունիմ Ձեր Սրբազնութեան որուն պատասխանին անհամբեր կսպասեմ:

1.— Եթէ Պօղոս վարդապետ ստուգիւ իր ստորագրութեամբ հանրագիր զրկած է Ռուսաստան, կրնայք խառն ժողովի միջոցաւ բացարձակապէս հաստատել, քանզի հանրագիրք տարողք հոս են: Թէ որ հաստատեցիք նոյն ժամայն մենք ալ Պօղոս վարդապետ չ'եմք ճանչնար:

2.— Եթէ չը ստուգեցիք վերոյիշեալ տեղեկութիւնք, նոյն ժամայն մենք և ազգն ալ շօշափելի կերպով պիտի տեսնենք որ խառն ժողովը չարաչար խաբուած է և թէ այս աքտորանաց հեղինակը լակ Ձեր Սրբազնութեան խաւարային ռիակալութիւնն է:

Եւ ինչպէս որ անմեղ մը աքտորեցիք, այնպէս ալ յետս կոչէք, իր վիճակը:

1872 սեպտ. 26

ՀԵՌԱԳՐՍԼՈՒՐԻ

ԱՒՍՏՐԻԱ—ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիէննա 16 հոկտ. Խորհրդարաններն դեկտ. 1 ին դուստրուելու հրաւիրուեցան:

ԳԵՐՄԱՆԻԱ

Պերլին 15 հոկտ. Կոյսեր կրտսեր եղբայր Ալպերթ իշխանը վախճանեցաւ:

Պերլին 16 հոկտ.

Այսօր Պատէնէն կայսեր գալուստը կ'սպասուի հոս:

Սուտ կը հանեն այն լուրը թէ Պ. Քայսերին կ. Պօլոյ դեսպան ընտրուելով՝ մեր կառավարութեան Արևելքի մէջ ունեցած քաղաքականութիւնը պիտի փոխուի:

ԳԱՂՂԻԱ

Բարիզ 15 հոկտ. Քաղաքապետը՝ 53 միլիոն ֆրանքի փոխառութեան առաջարկութիւն մ'ըրաւ:

Մարն և Հօթ-Մարն դաւառներն սկսան պարպուիլ:

ԱՆԳՂԻԱ

Լոնտրա 16 հոկտ. Գողղիոյ հետ առևտրական նոր դաշնագիրը կնքուեցաւ:

Լոնտրա 15 հոկտ.

Այսօր Պ. Էնֆիլտ ֆիրքամ գնդապետը պիտի ընդունէ, որն որ Եթովպիոյ ֆասսայի կայսեր կողմանէ մեր կառավարութեան քով եկած է արտաքոյ կարգի դեսպանութեամբ. ֆիրքամ գնդապետը կըսէ թէ Եգիպտոսի խտիվը իւր երկրին միացուցեր է Պօկօփ նահանգը, որ 800000 բնակիչ կը պարունակէ:

ՍՊԱՆԻԱ

Մատրիա 15 հոկտ. Ֆէրրօլէն առնուած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ ապստամբներուն աղաքստանած նաւարանին դէմ ըլլալիք յարձակումը մտաւրուտ է:

Մատրիա 16 հոկտ.

Ֆէրրօլի նաւարանն ապստամբող ապստամբաց դէմ յարձակումն սկսաւ: Ծովային եւ ցամաքային զօրքերն ապստամբները զարկին, կաւոյն միջոցներն սոսկալի փոթորիկ մ'ելաւ:

ԻՏԱԼԻԱ

Հռովմ 15 հոկտ. Լուր առինք թէ Թօսքանայի մէջ այլ և այլ ողողումներ տեղի ունեցեր են. մանրամասն պարագայներն դեռ չեն հասած:

Միլան 15 հոկտ.

Յորդահոս անձրևներուն վրայ Թօսքանայի դաշտերը շուրթերէն ողողուելով երկաթ ուղեացերթեկութիւններն ընդհատեցան:

Հռովմ 16 հոկտ.

Լօրիօմի հանքաց խնդիրը բարեկամ տէրութեանց միջամտութեան չը-

նորհիւր խնդրալուծեալ լուծուեցաւ :
Միւս կողմանէ ալ կը հաւաստեն
թէ խտակական կառավարութիւնը պի-
տի առաջարկէ եղեր Պ. թիէրի որ այս
գործոյն համար Ռուսիոյ կայսեր իրա-
ւարարութիւնը խնդրէ :

ՊԱՐՄԿՍՍՏԱՆ

Թէհրան 16 հսկտ.

Գահաժառանգ իշխանը քաղաքս
հասաւ ուր արտաքոյ կարգի պատուով
ընդունուեցաւ :

Կառավարական վերակազմութեան
ծրագիր մը ներկայացաւ Շահին վաւե-
րացնելու համար :

ՆԵՐՔԻՆ

Կայսերական հրամանաւ

Միհրան պէյ Տիւղեան Պետական-
խորհրդոյ անգամ անուանեցաւ :

Էջգաֆի Մեքթուպէի Հաքքը պէյ
հաշուակալութեան ատենին անգամ
անուանեցաւ :

— Ռուսիոյ դեսպան ինկնաթիւ վ
գորապետը չորեքշաբթի օր Բ. Դուռն
երթալով Մեքթուպէի հետ տե-
պակցութիւն մ'ունեցաւ :

— Նոյն օրը Գերմանիոյ գործակա-
տար Պ. տը Բատովից՝ խալիլ Շէրիֆ
բաշայի, իւր Ֆրնտըղլըյի ապարանքը
վերջն ալ Բ. Դուռը Մեքթուպէի
երթալով մէկ մէկ այցելութիւն տուաւ :

— Մեքթուպէի պաշտօ-
նատան մէջ գտնուած Տախիլիէի դի-
ւանը վերնալով, ասոր գործակալներէն
յաջողակներն Բ. Դրան ուրիշ դիւան-
ներուն մէջ ընդունուեցան, միւսներն
ալ իրենց մատուցած ծառայութեանցը
արժանեացը համեմատ, իւրաքայլորին
մէկ մէկ դադարական (թաղայիւտ)
թոշակ յատկացնելով գործէ քաշ-
ուեցան :

— Լեւոնթ — Հերըտ կը ծանուցանէ
թէ Չիւռնիացի հայազգի Տիրան էֆ.
Թաքթաքեան, որն որ վերջերս պա-
տերազմական գործոց պաշտօնատան ար-
տաքին թղթակցութեանց դիւանապետ
անուանեալ էր, անձնական տկարութեան
պատճառաւ հրաժարական տալով այս
բարձր պաշտօնէն, կը պատրաստուի
մտաբար Չիւռնիա վերադառնալ նորէն
իւր նախկին, ոչնէ կուսակալութեան
քարաւորութեան պաշտօնը վա-
րելու :

— Պոլսոյ թաղապետութեանց վե-
րակազմութեանը վերաբերեալ պաշտօ-
նական ծանուցումը չորեքշաբթի օր հը-
րատարակուեցաւ, կողմներն ու վոսրո-
րի գիւղերն ալ յիշեալ թաղապետական
չըջանակաց մէջ լինելով, որք ընդ ա-
մենը Ա ի բաժնուած են :

— Պոլսոյ քաղաքապետութեան Ա չըբ-
ջանակներէն միայն երկուքին նախա-
գահը քրիստոնեայ է :

Պէօյլուկաթէ Արիթիաի Պէյ
կողմներ՝ Բանճուրի էֆէնտի :

— Յունաց Պատրիարքը մտադիր է
եղեր խնդրել կառավարութեանէն, որ
հարկադրէ Պուլիարներն իրենց եկեղե-
ցականաց քաղաքային զգեստուց ձեւին
մէջ զիրենք Յոյն եկեղեցականներէն
զանազանող նշան մը կամ փոփոխու-
թիւն մը մտցունելու : Իսկ Պուլիարք
ինքզինքնին ըստ օրինի Օրթօտօքս ե-
կեղեցիէն բաժնուած չը համարելով,
հարկաւ պիտի պատասխանեն թէ ի-
րենք ամենափոքր փոփոխութիւն մ'ան-
գամ ընել չեն ընդունիր : Եթէ Յոյ-
ներն Պուլիարներէն զգեստի կողմանէ
տարբերիլ կուզեն, տղատ են իրենք
զգեստներուն ուղած ձեւերն տալ,
տուանց Պուլիարներն այդպիսի բանի
մը համար ստիպելու իրաւունք ունե-
նալու :

— Իրգրումէն հասած լուրերը կը
ծանուցանեն թէ կազմի (մէջէ) երկու
անտառներու մէջ, մէկը կարսի և միւ-
սըն ալ Չըլլորի վիճակացը մէջ, հըր-
դեհ մը պատահելով բուական օրեր
չարունակ այրեր է :

Տաճկաստանի անտառներուն մէջ
անտառաց օրէնքը խնտիլ ՚ի գործ գը-
նելու սկսուելէն ՚ի վեր, չափէն աւելի
և յաճախակի հրդէհներ պատահելը
նկատելով, թշնամութեան գործերը
լուր կատկած մը կուտան մեղ ասոնք :

— Աչացաւի փոխանցիկ հիւանդու-
թիւնը, որ ժամանակաւ, մեծ զոհեր
ըրաւ Չիւռնիոյ մէջ, այս անգամ
վերստին երևան ելեր է : Խուսք խուսք
կոյրեր կը տեսնուին եղեր ամեն կողմ,
որք հիւանդանոցաց կամ դեղագործ-
ներուն դռները ափ կ'առնուն դար-
ման խնդրելու համար :

— Դանուրի լրագիրը կը ծանուցա-
նէ թէ ամսոյս 2 ին (Ն. Տ.) քառա-
սունի չափ աւաղակներ Բարնապոթ
մեծ գիւղը մտնելով գիշերանց տեղւոյն
հարուստ չորպաճիին տունը կը կոխեն,
և տանաէրն ու սրդին վիրաւորելէն

յետոյ 10 հազար ոսկոյ գումար մը
յափշտակելով կը մեկնին : Անմիջապէս
հեծեալ ոստիկանաց խումբ մը հալա-
ծել կ'սկսի զանոնք, որոնք ոստիկան-
ներէն աւելի թուաւոր ըլլալուն պատ-
ճառաւ, ասոնցմէ մէկ քանին վիրաւո-
րելէն յետոյ կը փախնին :

Դանուրի կուսակալին անմիջապէս
հեռագիր քաշուելով, սա ևս նոյն պա-
հուն պէտք եղած տեղը կը հեռագրէ,
հրաման հանելով տեղական իշխանու-
թեանց որ աւաղակներուն ճանքան կրա-
րեն, և ողջ թէ մեռած՝ անպատճառ
զանոնք բռնեն ու բերեն :

— Երեքշաբթի երեկոյ արևը մարը
մտնելէն յետոյ Բէժիի դետերէն (քօլ-
ճու) մէկը Աղապ-Բաբուն Պապա-Հիւ-
սիին անունով անձի մը խանութը կը
մտնէ : Այս Պապա-Հիւսէյինը Բէժիի
հաստատութենէ ՚ի վեր գործէն քաշ-
ուած ծխավաճառ մ'էր, որ դատարկ
խանութէ մը զատ ուրիշ բան չունէր
ձեռքը, ուր կը պառկէր գիշերներն :
Նախկին ծխավաճառը դեռին խանու-
թէն ներս մտնելը տեսնելով, կը հարցնէ
թէ ինչ կուզէ :

— Խանութդ խուզարկելու, կը պա-
տասխանէ քօլճին, տեսնելու համար թէ
ծխախոտ կայ արդեօք :

— Այ, չըկայ, կըսէ Պապա-Հիւսէ-
յին, բոլոր ունեցած ծխախոտս ժամա-
նակին Բէժիի տեսչութեանը յանձնեցի
քանի մը տրամ միայն ունիմ արկղիս
մէջ, ան ալ իմ գործածութեանս հա-
մար վար գրած եմ, և որոյ համար ալ
ժամանակին պէտք եղած տեղէն արտօ-
նութիւն առեր եմ : Դուրս ելի՛ր ուրե-
մըն խանութէս, հոս քեզի համար գործ
չըկայ :

Այս խօսքին վրայ քօլճին որ արը
եալ է եղեր ալ, բռնի խուզարկել
կուզէ, և թուրը մէջքէն քաշելով զար-
նել կապառնայ ծխավաճառին, երբ
մարդուն ձայնէն մտաւայ դրացիները
վրայ հասնելով, Բէժիի գործակալը կը
հեռացնեն այն տեղէն :

— Նոյն օրը Բէժիի ուրիշ գործա-
կալ մը Ղալաթիա մուրացկան մը տես-
նելով, որ թաշկինակին մէջը ափ մը ձը-
խախոտ դրած պատի մը ստորտը ա-
րևուն տակը բռնած կը չորցնէր, ծխա-
խոտը ձեռքէն յափշտակելով կը զրա-
ւէ. նենգամոյժ (գաշագ) է ըսելով :
Մուրացկանին վայ դիտուն կուզայ մին-
չև որ կը համոզէ գործակալը, թէ այդ-
նենգամոյժ կարծած ծխախոտը փողոց-

ներէն ժողոված սիկառներէն յառաջ եկած է: Գործակալը ասոր ալ չուզելով հաւատալ, այն կողմէն անցնողներն գործայն մէջ կը մտնեն և թաշկինակին մէկ քովը կեցած՝ մտրած սիկառներու թղթի կտորուանքը կը ցուցանեն իրեն որն որ ալ այս ապացոյցին վրայ համազուելով, կը թողու մտրացիանին օձիքն ու կը բաժնուի:

Շիտակն ըսելու համար Բէժիի ընկերութիւնը այս տեսակ աշաւորջ քօլճիներ ունենալէն ետքը՝ խիտ հաւանական է թէ հինգ տարուան մէջ ընելիք վաստակը հինգ ամսուան մէջ շահի:

ՀՐԱԻԻ

ՅԲ. ԸՆԴՀԱՆՈՒԹ ԺՈՂՈՒ ԵՆԲՍ. ՍՍ. ԵՍԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՍԳԻԻԳԻ

Խաազիւզի Ներսիսեան երկեսն վարժարանին յառաջադիմութեան նպատակու նպատակաւ կազմուած Ներսիսեան Սանուց Ընկերութիւնը իւր առաջին Ընդհանուր Ժողովը գումարեց 1870 Հոկտեմբեր 4 ին յորում Ընկերութիւնը կազմեաց հրատարակելէ զատ՝ հինգ անձերէ բաղկացեալ Յանձնախումբ մը ընտրեց: պաշտօն տալով անոր Ընկերութեան կանոնաց Ծրագիր մը պատրաստել և ներկայացնել յաջորդ Ընդհանուր ժողովին ի վստերացումն:

Այն երկրորդ Ընդհանուր Ժողովը հրատարակեցաւ ի գումարումն 1871 Յունուար 15 ին բայց նոյն օրը մեծագոյն մաս մը չը շոյանալով՝ նիստը տեղի չունեցաւ:

Նոյն օրէն ցայսօր այլ և այլ պատճառներով սոյն նիստին գումարումն յայտնեցաւ, որով և Ընկերութիւնը՝ թէ և կազմեալ՝ չը կրցաւ օրինաւոր կերպարանք մ'առնուլ և իւր նպատակը գործագրելու անկարելիութեան մէջ մնայ:

Սակայն տեսնելով որ սոյնպիսի կարևոր Ընկերութեան մը իւր վերջնական կազմակերպութիւնը տալու ալ ևս ուշանալն անորդարանալի յանցանք մը կըլլայ՝ մանաւանդ թէ քաղցրութիւ անձանց փոփոքին արկայեալ, կը վտայանք ահաւասիկ յառաջիկայ կիւրարէ, Հոկտեմբեր 8, հրաւիրել Ընկերութեան անդամներն և միանգամայն այր Ներսիսեան Սաներն յերկրորդ Ընդհանուր Ժողով Ընկերութեան, ի ժամ 3 Ս. Ներ վարժարան: 1. Քննելու և վարացնելու համար Ընկերութեան կանոնաց քաղցրը՝ զոր խմբագիր Յանձնախումբը պիտի ներկայացնէ ժողովին՝ հանդերձ իւր Տեղակալովը, և 2. Ընկերութեան վարչական մարմնոյն ընտրութիւնը կատարելու:

Կարևոր կը համարիմք խնայել որ ներայ գտնուողներէն տնոնք՝ սրբ դեռ չեն ամսանորդ աղբուած Ընկերութեան Ժողովը:

վոյն գործողութեանց մասնակցելու իրաւունքն ունենալու համար պարտին նախապէս բաժանորդագրուիլ:

Կը յուսանք որ ամեն անգամ և ամեն Ներսիսեան Սան պարտք կը համարի իրեն իւր ներկայութեամբ պատասխանել մեր այս հրաւերին, և իէ նոյն օրն Ընկերութիւն իւր օրինաւոր կազմութիւնն ընդունելով՝ կը ձեռնարկէ աշխատել ի գործագրութիւն սոյն գեղեցիկ նպատակին վր առաջադրած է: Առժամանակեայ Դիւան Ընդհ. Ժողովոյ ԱՏԵՆՊԻ ԻՐ՝ ԱՏԵՆՊԵՏ Ռ. Յ. Պերպէրեան Սարգիս Արքահամեան 1872 Հոկտ. 1 խաազիւզ

Հայազգի վարժարհի մը, որ այլ և այլ ազգային վարժարանաց մէջ համարատեսութեան և կառավարչութեան պաշտօն վարած է, պատրաստ է Ազգային վարժարանաց մէկուն մէջ կամ առանին վարժչութեան համար սոյն պաշտօնները յանձն առնուլ, արժանապէս գոհացնելու պայմանաւ:

Պէտք տեսցոյր կը այ մեր գրասենեակը գիծելով տեղեկութիւն ստանալ:

Տալա վէ մուհաբէմէ յէ միւթէալըք խոստատութիւն ըստ յիշմիտի պիւլ վէ քիտալէ իճրա իթմէք վէ նզամի տայիլէ օինալէ մէքէսորո քրօթէսթօ վէ իւթիտա լմանգիթ իթմէք իչին Մահմուդաշա սա Գամանթօ խանընտէ 21 Նօ մահէլ մախսուս քի շատ օրունտու զոնտան հէր քէօի խօշուտ իտէճէք սորէթտէ իշէրինին լմէսթիլէ իտիլճէկի վէ հէր կին նաաթ ալթըյո գատար աչըք պուլու եաճաղի իրան օրունուր: 1872 սեպտեմբեր 16 13

Ի Լ Ա Ն

Պաւ տէֆա ալէա իւզիմտէն Մատիքայա լմահվիլ խտիլէրէք քի ինսանըն վիճուտինէ վէ խոստօխլէ միյտէսինէ ֆայիտէլի սորէթտէ օլմոգ իւզրէ վէ աիկէլէրաէն կայէթ նէֆիս պիր գաշ նէվի ալա Բողը իյմալ վէ լմէր լիպ իլէ Գալթթատա խալէար-խանըն քիւշիւք քօբօսս իթտիտայինալէ նու մէքօ 3 լէ միւրաքրամ մաղաղատա ֆիլոսոթ օլունմաղաա ալըր:

Մէզքիւր Բաքընըն իսթիմալի պուանէ գատար էմալի կէօրիլմէճիշ սուրէթտէ կայէթ խօշ վէ սալա պաշարըրըք կասպէթ իթմէյէրէք զիյատէսինճէ իշթահա եարտըմ իտէր վէ ինսանա ֆէլքէլատէ լմէսպիրիլ քիլմաղ վէրիլք օլուղու վաղը օլան լմէճրիւպէլէրտէն անկաշըլմէշ ալըր:

Դիրքով փոքր, ճոխ պարունակութեամբ, որոյ գլխաւորներէն մի քանին են հետեւեալք: Խաւարմունք, Թղթատարութիւն, Հեռագիրք, Շոգ ենուք, Երկաթուղիք, Թրամվայ, Գլխուոր Տէրութիւնք աշխարհի, Առողջական կանոնք, Ընտանեկան կարևոր ի լմէր մաղի, եղունգի, աչաց և ախալի դարմանում, յաճախ պատճառող տկարութեանց, ինչպէս նաև շունէ խոճնուողաց, թուճաւորերոց, մեղուներէ խայթուողաց, արեցողաց, խլութեան, շիլ աչաց, կնատկ և թիփոտ գլխոյ եղունք ծամող մանկանց, դարչահատ շիջոց, գլխու, վիզի, ծիծերու ելն ցուերու, լու, մուկ, ճանճ և ըն. Չիլիլ, մանկատաճալթիւնք, առածներ, պտտմութիւնք, մրցանակուոր հանելուկք, բեւեռագրի մը պատկերը և նորա թարգմանութիւնը, ծանուցումք, արցունք գրութեան տեար:

Կը ծախուի գրավաճառաց քով և Պորաքան. կեդրոնատեղին է Ֆրէնկեան Գրատունը ի Մէրճան, զին պարզ կազմուածի 2 զուրուշ:

ՇԱՏԱԻՍՍ ՍՍՓՐԻՃԸ

Կատակերգ օթիւն յերկուս արարաթարգմանութիւն

Տ. Գ. ՓԱՓԱՉԵԱՆ

Կը ծախուի կամուրջի գլխու պարագան, լրագիր ծախողներու և ամենհայ գրավաճառաց քով. գին 100 փարայ:

ԳԺՈՂՔԷՆ ՓԱԽԱՄ ՄԱՐԴ ՄԸ

Կ Ա Մ

ԳԺՈՒՅՑ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ

Բ.

Կը ծախուի կամուրջին գլխու պարագան. գին 50 փարայ:

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԵՐԵԱՆՍՈՒ ՕԳՍԷՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՕՒԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԵՌՆՈՒՅԵԱՆ—ԽՈՆ ԹԻԻ 4—5